***Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ** (2021-2022 **ուստարի**)*

11-**րդ դասարան (տևողությունը՝** 150 **րոպե)**

***ա) Հայոց պատմություն** (20 **միավոր**)*

1. Որքա՞ն է Ճորոխ գետի երկարությունը. 0,5 մ.
   ա) 305 կմ բ) 345 կմ գ) 351 կմ դ) 435 կմ
2. Սովորաբար քանի անդամից էր բաղկացած լինում տոհմական համայնքը. 0,5 մ.
   ա) 50-100 բ) 400-500 գ) 300-400 դ) 150-200
3. Որքա՞ն էր բուն հռոմեական զորքերի թիվը Ք.ա. 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտում. 0,5 մ.
   ա) 70 հազար բ) 22 հազար գ) 55 հազար դ) 20 հազար
4. Ո՞վ է հիմնադրել Աղբերց վանքի դպրոցը. 0,5 մ.
   ա) Հովհան Որոտնեցի բ) Վահրամ Ռաբունի գ) Ներսես Մշեցի դ) Հովհաննես Իմաստասեր
5. Ե՞րբ է Պարսից շահը ճանաչել Սյունիքում ստեղծված հայկական իշխանությունը. 0,5 մ.
   ա) 1724 թ. բ) 1727 թ. գ) 1722 թ. դ) 1725 թ.
6. Ե՞րբ է տեղի ունեցել հայ հասարակության ամուսնա-ընտանեկան և բարոյական կյանքը կարգավորող Սսի եկեղեցական ժողովը. 0,5 մ.
   ա) 1184 թ. բ) 1265 թ. գ) 1243 թ. դ) 1264 թ.
7. Ո՞ր ճակատամարտն է տեղի ունեցել 1735 թ. հունիսին. 0,5 մ.
   ա) Եղվարդի բ) Գանձակի գ) Կարսի դ) Էրզրումի
8. Ե՞րբ են ռուսները գրավել Ախալքալաքը. 0,5 մ.
   ա) 1828 թ. հունիսի 23 բ) 1828 թ. հուլիսի 23 գ) 1828 թ. օգոստոսի 15 դ) 1828 թ. օգոստոսի 23
9. Ե՞րբ է Կովկասի փոխարքայությունը վերափոխվել կառավարչապետության: 0,5 մ.
10. Ինչպե՞ս է կոչվել Թավրիզում ՀՅԴ հիմնադրած զինագործական արհեստանոցը: 0,5 մ.
11. Ո՞վ է հիմնադրել «Մշակ» թերթը: 0,5 մ.
12. Հայ-թաթարական բախումների ժամանակ որտեղի՞ ինքնապաշտպանությունն էր ղեկավարում Արմեն Գարոն: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Խոսրով II-ը գումարում է Տիզբոնի ժողովը, որին մասնակցում էին պարսից տիրապետության տակ հայտնված երկրներից հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ:
    բ) Հերակլը Խաչափայտը վերադարձնում է Երուսաղեմ:
    գ) Բյուզանդական զորքը խոշոր պարտություն է կրում Յարմուք գետի ափին:
    դ) Մրենի եկեղեցու կառուցումը:
    ե) Վրաց եկեղեցու կողմից քաղկեդոնականության ընդունումը:
    զ) Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը:
    է) Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորումը:
    ը) Արաբները Դվինից գերեվարում են 35000 հոգու:
    թ) Հայոց մարզպան է դառնում Վարդտիրոց Բագրատունին:

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. 1828 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած տարածքներ տեղափոխված պարսկահայերի թիվը
    2. Երևանի բնակչությունը 1850 թ.
    3. Շուշիի բնակչությունը 1910 թ.
    4. Ալեքսանդրապոլի բնակչությունը 1910 թ.
    5. Կարսի բնակչությունը 1910 թ.
    6. Կարինի բնակչությունը 1893 թ.

    ա. 35 000 բ. 42 000 գ. 12 600 դ. 40 000 ե. 45 000 զ. 30 000

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) Մարդկության պատմության քաղաքակրթական շրջանը սկսվում է երկաթի դարից:

բ) Արաքսի ձախ ափին Մենուան հիմնում է ռազմավարական խոշոր հենակետ՝ Մենուախինիլին:

գ) Արտաշես Ի-ի հրամանով կանգնեցված սահմանաքարերից շուրջ քսանը ունեն հայերեն արձանագրություններ:

դ) Արտավազդը Կրասոսին խոստացել է տրամադրել 24-հազարանոց այրուձի և 16-հազարանոց հետևակ (ընդամենը՝ 40 հազար զինվոր):

ե) XV դ. Կաֆա քաղաքի 70 հազար բնակչից 46 հազարը հայեր էին:

զ) Տրդատ III-ը Արտավազդ Մանդակունուն նշանակել է հազարապետ:

է) Հայ բնափիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ է Հովհաննես Երզնկացին (1250-1326):

ը) Երիտթուրքական հեղաշրջումից հետո՝ 1909 թ. սկզբներին, արտասահմանից միայն Տարոն վարդարձել է 15 հազար մարդ:

թ) Բագրատունյաց շրջանում մշակելի դարձած հողային տարածքները կոչվում էին նորք:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա) Արաքսը՝ հայոց մայր գետը, սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից:

բ) Համաշխարհային պատմության երրորդ պարբերաշրջանը կոչվում է նախապատմական շրջան:

գ) Հայտնի է, որ մեկ երկիրը չի կարող կրել տարբեր անվանումներ տարբեր լեզուներում:

դ) Արտաշես Ի-ը ծնվել է մոտ Ք.ա. 230 թ.:

ե) Վանի թագավորությունում սեպագիր նշաններով արտահայտվել են բաղաձայնները, երկձայն և եռաձայն վանկերը:

զ) Կիլիկյան Հայաստանում գոյություն չի ունեցել համայնական հողատիրություն:

է) Հնչակյան կուսակցությունը որևէ էական դեր չի ունեցել հայ-թաթարական բախումների ժամանակ:

ը) 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը առավելություն ուներ 1895 թ. բարենորոգումների Մայիսյան ծրագրի նկատմամբ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) Հմայապաշտությունը հավատն է գերբնական ուժերի միջոցով նյութական առարկաների, երևույթների և անձանց վրա ազդելու մարդու ունակության նկատմամբ:

բ) Հայոց նախաքրիստոնեական ավանդազրույցի համաձայն՝ մեր ժողովուրդը համարվել է Հայ(ա) աստծո և նրա որդի Հայկ դյուցազնի ժառանգը:

գ) Վանի թագավորության գրային բարեփոխումը՝ տեղական սեպագրի ստեղծումը, տեղի է ունեցել Իշպուինիի կառավարման սկզբնական շրջանում:

դ) 1266 թ. Սև լեռների մոտ տեղի ունեցած ճակատամարտում Հեթում Ի-ի որդի Թորոսը գերի է ընկել:

ե) 1901 թ. նոյեմբերի 3-ին Անդրանիկը 37 հայդուկների և 80 զինված գյուղացիների հետ մտել է Ս. Առաքելոց վանքը:

զ) Սասունի 1894 թ. դեպքերից հետո, բրիտանական կառավարության պահանջով, Համիդը ստիպված դեպքերը հետաքննող հանձնաժողով կազմելու որոշում է ընդունել:

է) 161 թ. հայոց գահը հանձնվում է Բակուր Արշակունուն, որին, սակայն, հռոմեացիները գահընկեց են անում և տանում Հռոմ (163 թ.):

ը) 748 թ. հայերը կրկին ապստամբում են արաբների դեմ՝ Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների գլխավորությամբ:

թ) 1811 թ. նոյեմբերի սկզբին, տեղի հայերի ու վրացիների գործուն աջակցությամբ, ռուսական զորքերն արագորեն գրավում են Ախալցխայի փաշայության տարածքի զգալի մասը, սակայն Ախալցխան գրավել չի հաջողվում:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Ք.ա. 88 թ. Պարթևստանում գահ է բարձրացել Միհրդատ II թագավորը:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բաբելոնից) հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավարկում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը Ասորեստանից վերն է, նրանք կտրում են ուռենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման... Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր»:

ա. Ո՞վ է այս վկայության հեղինակը:

բ. Ո՞ր պետության տարածքում նավարկության մասին է խոսվում վերոնշյալ տողերում:

գ. Ե՞րբ էին պարսիկները գրավել Բաբելոնը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

...-ում (1) կազմավորվել է Մելիք-Մարտիրոսյանի ... (2) հոգանոց կամավորական ջոկատը: Ի վերջո, 1828 թ. օգոստոսի ...-ին (3) ռուսական բանակը գրավում է բերդը:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 4800 տարեկան է, բրոնզի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում արևմուտքում:

23. Հայ ազատագրական շարժման ո՞ր գործչի լուսանկարն է պատկերված. 0,5 մ.

24. Աշխատանք 1908 թ. ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր տարածաշրջանում հակամարտությունների սրումն է պատկերված նկարում:

բ. Ո՞ր պետությունն է խորհրդանշում նկարի ձախ կողմում կանգնած անձը:

***բ) Համաշխարհային պատմություն** (10 **միավոր**)*

1. Որքա՞ն մարտիկներից էր բաղկացած Աքեմենյան բանակի «Անմահների գունդը» Դարեհ Ի-ի օրոք. 0,5 մ.
   ա) 10 հազար բ) 100 հազար գ) 20 հազար դ) 50 հազար
2. Քանի՞ հոդվածներից էր բաղկացած Ազատության մեծ հրովարտակը. 0,5 մ.
   ա) 103 բ) 93 գ) 63 դ) 33
3. Ե՞րբ է կնքվել Նիկիասի հաշտությունը. 0,5 մ.
   ա) Ք.ա. 431 թ. բ) Ք.ա. 415 թ. գ) Ք.ա. 421 թ. դ) Ք.ա. 404 թ.
4. Ո՞ր կայսեր օրոք է Հռոմեական կայսրությունը նվաճել Դակիան. 0,5 մ.
   ա) Վեսպասիանոս բ) Տրայանոս գ) Մարկոս Ավրելիոս դ) Կլավդիոս
5. Ո՞ր թվականին է վերացվել Լատինական կայսրությունը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. «Աստվածաբանության հանրագումար»
   2. «Դեկամերոն»
   3. «Կոստանդնուպոլսի գրավումը»
   4. «Հուշագրություն»

   ա. Ֆիլիպ դ'Կոմին բ. Թովմա Աքվինացի գ. Վիլարդուեն դ.Ջովաննի Բոկաչչո

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա) Առաջին զիկուրատը կառուցվել է Ուրուկ քաղաքում:
   բ) Օկտավիանոսը Ք.ա. 27 թ. ստացել է ցմահ կոնսուլի պաշտոն:
   գ) Ու Դի կայսեր օրոք (Ք.ա. 140-87) Չինաստանի բնակչությունը հասնում էր շուրջ 80 միլիոնի:
   դ) 751 թ. Սուասոն քաղաքում Պիպինը հռչակվել է թագավոր:
   ե) Սուրբ Սոֆիայի տաճարը կառուցվել է 522-527 թթ.:
   զ) 1252 թ. Ֆիլիպ IV–ը հրավիրել է Գլխավոր շտատներ, որտեղ ներկայացված էին երեք դասեր (շտատներ)՝ հոգևորականներ, ազնվականներ, քաղաքացիներ:
   է) 1840 թ. Լոնդոնում Ռուսաստանը, Անգլիան, Ավստրիան, Պրուսիան և Օսմանյան կայսրությունը կնքել են համաձայնագիր, որտեղ առկա է սևծովյան նեղուցների կարգավիճակի վերաբերյալ դրույթ:
   ը) 1926 թ. մի շարք երկրներ ստորագրել են Փարիզի պայմանագիրը՝ Բրիան-Քելլոգի պակտը:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Ռեալիստական արվեստի նշանավոր ներկայացուցիչ գրողներից 2-ին,
բ. Ռոմանտիկ նշանավոր երաժիշտ-երգահաններից 2-ին:

9. Աշխատանք 1789 թ. Եվրոպայի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր արքայատոհմի տիրույթներն են պատկերված մուգ գույնով:
բ. XVII դարում այն ո՞ր պետության տարածքն է նվաճել Օսմանյան կայսրության դեմ պատերազմներում:

10. Նոր դարերի ո՞ր նշանավոր գործչի նկարն է պատկերված ստորև. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞վ է ծաղրանկարի ձախ կողմում պատկերված անձը:
բ. Ո՞ր համակարգի ձևավորման գործընթացում ծառացած խնդիրներն են պատկերված:
գ. Ի վերջո, ի՞նչ կազմակերպություն ստեղծվեց այս գործընթացում:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2022 թ.